ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է «ԷՔՍՊԵՐՏԻԶ ՖՐԱՆՍ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

14.02.2022 16:02

Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատը հյուրընկալել է Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդման ծրագրի «Էքսպերտիզ Ֆրանս» Ֆրանսիայի միջազգային փորձագիտության գործակալության ներկայացուցիչներ՝ դատարանների գնահատման գծով փորձագետ, CCPT-ի անդամ Վինսենթ Դեբլոյին և դատական վիճակագրության գծով փորձագետ Աննի Քենսին:

Ողջույնի խոսքով հանդես եկավ Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Արմեն Ասատրյանը՝ հյուրերին ներկայացնելով Փաստաբանների պալատի , Հանրային պաշտպանի գրասենյակի և Փաստաբանական դպրոցի գործունեության առանձնահատկությունները:

Միջազգային փորձագիտության գործակալության ներկայացուցիչները, շնորհակալություն հայտնելով հյուրընկալության համար, նշեցին, որ իրենց այցը միտված է ԵՄ ֆինանսավորմամբ ՀՀ-ում արդարադատության ամրապնդման ծրագրի իրականացմանը, մասնավորապես՝ ՀՀ-ում դատարանների գնահատման նոր համակարգի ներդրմանը:

Ծրագրի շահառուներն են Փաստաբանների պալատը, Արդարադատության նախարարությունը, Արդարադատության ակադեմիան, Դատախազությունը և իրավական ոլորտի այլ կառույցներ:

Դատարանների գնահատման գծով փորձագետ Վինսենթ Դեբլոն նշեց, որ ՀՀ-ում դատական համակարգի գնահատմանն ուղղված ծրագիրը նախաձեռնելիս, որպես օրինակ՝ ուսումնասիրվել է նաև Ֆրանսիայում, Իտալիայում և Ալբանիայում առկա փորձը :

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին նաև դատաիրավական ոլորտին առնչվող մի շարք այլ հարցեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })